Հուսիկ Արա

Պատմի՛ր նրան, գնչուհի

Ի՜նչ գեղեցիկ եմ ես,
երբ խոսում ես նրա մասին:

Ասա՛, գնչուհի,
ափս մի նայիր,
աչքերիս մեջ հրաշքը տես.
պատմի՛ր նրան մինչև վերջ,
որ ամենագեղեցիկը լինեմ ես:

Ասում ես՝ չհասնել նրան,
նույնն է, թե կյանքում բան չես տեսել,
նրան չգտնել, հավասար է,
որ աշխարհում ամեն ինչ ես կորցրել.
այդ հրաշքը հասկանալու համար ես ծնվել, ասում ես,
և դրախտը այլ տեղ չփնտրեմ:

Նրա հայացքով լո՛ւյսը ես ուզեցի հատուցում,
ամենաթանկը՝ իբրև պարգև
մի ամբողջ կյանքի համար չստացված…

Խոսի՛ր, խոսի՛ր, իմ սև ու թուխ գնչուհի,
մոռանալու արվեստը սովորեցրու ինձ՝
անվերջ հիշեցնելով նրա մասին:

Ես լույս եմ տեսնում,
սպիտակ հայացքով առավոտ
և արևի մեջ քայլող երազներ.
մի ուրիշ աշխարհ,
որ դեռ չի եղել մեր կողմերում:

Պատմի՛ր, գնչուհի,
ես արդեն թևեր ունեմ,
հրեշտակ եմ ճեփ-ճերմակ,
որովհետև դու խոսում ես նրա մասին: